

ՄԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՌՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԻՍՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 18-ին մեծ շուրջով վերի ունեցավ Սևանա գեղագիտական թերակղզում հիմնված Վազգենյան Հոգևոր Դպրեվանքի 2000-2001 թթ. ուսումնական փարեշրջանի վերամուտի հանդիսությունը, որին իրենց մասնակցությունն էին բերել Գերաշնորհ Տ. Տաթև արքեպոստ, Սարգսյանը, Հոգեշնորհ Հայեր Տ. Վերանես վրդ. Արքահամյանը, Տ. Վազգենը վրդ. Միքայիլ Արքահամյանը, Տ. Արքակ վրդ. Տիգրանյանը, Տ. Զարեն վրդ. Կարապյանը, Տ. Ներսեն արդ. Խոլաթյանը, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ, պրոֆ. Ռաֆայել Պապյանը. Սևանի քաղաքապետ պարուն Աշուր Ավեքսանյանը: Ներկա էին նաև դեսչական ու դասախոսական կազմի անդամներ, Մայր Աթոռի միաբան սարկավագներ, լրագրողներ, ծնողներ և Սևան քաղաքի մի խոմբ հավաքացյաներ:

Դպրեվանքի վերամուտի հանդիսությունն սկսվեց կոմիտասյան «Հայր մեր»-ով և հանրապետության հիմնով՝ կատարմամբ դպրեվանքի նորասրեղ քառաձայն երգչախմբի, ղեկավարությամբ Շոյա Վարդանյանի: Այսուհետք հանդիսության բացման բովանդակալից խոսքով հանդես եկավ Վազգենյան հոգևոր կրթօջախի նորանշանակ դեսչու, Հոգեշնորհ Տ. Բագրատ արդ. Գալսպյանը.

«Փառք և զոհություն Ամենակալ Ասրծուն, որ մեզ ևս մեկ անգամ առիթն ընծայեց կապարելու Սևանի Վազգենյան Դպրեվանքի ուսումնական շրջանի վերամուտը, մի հասկապության, որ լծված է «արիացեալք մանկունք» պատրաստելու հայոց փորդիկ ածուի համար:»

Այսու որդիական ին ամենաախտնարի և ջերմ շնորհակալական զգացումներն եւ ցանկանում փոխանցել ազգին Ընդհանուրական Հայրապետ Տ. Գարեգին Բ Միքաղեազուն Կաթողիկոսին, որ մեկ ամիս առաջ անվարան կերպով ինձ՝ «անարժան մշակի», կոչեց այս բարձրագույն պատրասիանարդություն պահանջող սերնդապատրաստության պաշտոնին: Այդ վարահությունը մղում է ինձ առավել զգոնության և առավելացույնը ներդնելուն այս դպրեվանքի կյանքի զարգացման և բարգավաճման համար՝ հարուկ գիրակցելով, որ նրա առաքելությունը սահմանափակված չէ միայն այսօրով, այլև այսպեսից է դուրս գալու հոգևոր արժեքներին հարազարդուն փարված հայ մարդը, հայ հոգևորականը՝ ծառայության ամենաախտնարի ասպիճանից մինչև բարձրագույնը:»

Գաղտնիք չէ, որ պատը բարիներ առաջ պայմաններում դպրեվանք հիմնադրելը հրաշքին համապոր մի երևոյթ էր, որ մարտին զգեցավ այս օրերին Գարեգին Միքաղեանի և այսօր Ազգի Ասդվածարյալ Հայ-

բապելի անկուրուս հավաքքի համառության, անվիար հույսի և անսակարկ սիրո շնորհիվ: Մենք, որպես Վազգենյան դպրեվանքիներ, որպես դեմք ուղարկում են ուսանողություն, պայծապես իրավունք չունենք կամած ներշնչելու մեջ պարտապահամությամբ ու հանձնառությամբ, այլ առավել կենսավորելու այս հոգնոր հոնցը, որպեսի լիարժեքությամբ կարողանանք մեր Տիրոջ Կենսապու Մարտինն ու Արյունը կենդանի հաղորդությամբ, անմեղությամբ և արփորթյամբ ընծայել մեր ժողովրդին»:

Խոսքն ուղղելով մասնավորաբար հոգնոր հայրերին՝ գետու Հայր Սուրբն ընդգծեց, որ ինքը՝ որպես երիկասարդ և նորանշանակ գետու, իր այդ դմբարին ու պարտասխանապու գործի համար կարիքն ունի նրանց աջակցության՝ իրենց փորձառու իմաստնությամբ, հավաքքի ուժականությամբ և աղոթքի գորությամբ. «Օրինեցնե՛ք և մեզ, առարարար բաշխե՛ք ձեր շնորհներից՝ մշտապիս ինանալով, որ դրանք հեղվելու են պարարդ և ընկալունակ հոգիների վրա»:

Ապա դիմելով Դպրեվանքի դասախոսներին՝ Հայր Սուրբը շեշտեց այն կարևորագոյն դերը, որ վերապահված է նրանց մարդ կերպելու իրենց սրբազնասուրբ առաքելության մեջ.

«Թե՛ այս դպրեվանքի, և թե՛ վաղվա հայադրոշն, ասպիվածանու հոգնությանի նկարագրի մեծանուն պարտասխանակությունները դո՛ւր եք՝ այն մշակեները, որոնց ցանած սերմերն արդյունավորվելու են ի բարին կամ ի չարը, հերթաբար դուք եք կրողները սերնդապարտասպության՝ ձեր զիրությամբ, իմաստնությամբ և հանձարով»:

Տեսուց Հայր Սուրբն անկեղծ ու սրբաբուխ խոսքերով իր շնորհավորանքը և շնորհակալությունը հայփնեց ծնողներին, որոնք իրենց զավակներին վսրահել են Դպրեվանքի խնամքին ու գորգուրանքին՝ կամավորապես հանձն ատնելով կորիզ նրանց ընկանեկան ջերմ հարկից. «Որևէ վայրկյան քող կասկածանքի մրրիկը չարսափեցնի մեզ, թե՛ այս ճանապարհի վրա կորցրալ եք ձեր զավակներին: Ընդհակառակը դուք շահել եք նրանց ավելիով, քանզի ընծայել եք Ասրծոն, ազգի և հայրենիքի սուրբ սեղանին՝ որպես անարար ընծայալներ»:

Եվ վերջապես, դառնալով ուսանողությանը՝ Հայր Սուրբն իր պարզամերն ու խորհուրդները փոխանցեց. «Միրեկի՛ ուսանողներ, որ հանձն եք առել ասպեկտ, ուսանել աղոթել Անանի այս հրաշազան վանական միջավայրում՝ իր բոլոր դմբարություններով ու դյուրություններով, թերություններով ու առավելություններով. պետք է հետո վանեք այն ամենը, ինչը հուսահարեցնող է. ծուլացնող և լիլուցնող: Մեկանյա իմ բնակությունն այս միջավայրում և շփումը ձեզ հետ ապացուցել են, որ դուք հոգնոր-բարոյական ամենարարձը կերպվածքով երիտասարդներ եք, ովքեր պատրաստ են զոհաբերության և իմբընդայումն իրենց Եկեղեցու և Հայրենիքի համար»:

Իր ելույթի վերջում Հոգեշնորի Հայր Սուրբը անդադարձավ նաև իր առաջիկա ծրագրերին. «Այս տարի Դպրեվանքն իր ուսումնական շրջանն սկսում է 54

ուսանողներով: Կեցության պայմանները դժվարին են, ինչպես ինքներդ կարող եք դադել, սակայն նոր կառուցվող և Աստծո հույսով գալիք բարգան ավարտվող նոր մասնաշենքն անբողջությամբ կփոխի այս իրավիճակը:

Ուրախությամբ պիտի հայրնեմ, որ ընթացքի մեջ է Դպրեվանքի «Ս. Առաքելոց» բարեգորքի պատրաստությունը և Աստծո կամրով պատրաստ կլինի հոկտեմբեր ամսվա վերջին, որ կարուցողի թե՛ նախակին, և թե՛ ներկային ուսանողության ընդհանուր պարկերը՝ ամփոփելով իր մեջ անցած բաւանական ճանապարհը:

Եվ վերջապես, Վեհափառ Տայրապետի բարեհաճ թույլտվությամբ և Աստծո առաջնորդությամբ դեկտեմբերի սկզբներին ծրագրել ենք մեծ շուրջով նշել Դպրեվանքի 10-ամյա հորեւյանը: Վարլած մեզ զորավիզ:

Այս պահին կրկին իմ աղոթքի եմ բարձրացնում դեպի մեր մարմնացյալ Տերը և հայրնում մայրերի մայր և Սեւանի վանոց հովանավոր Ս. Աստվածածնի բարեկտությունը, որին ապավիճնած պիտի շարունակենք մեր կրտսեր՝ Տիրոջ խոսքին հավատավոր նվիրումով՝ մշտապես մրմնացալով.

«Մայր Սուրբ բարեկտուեա»:

Տևադի խոսքի հետո Վազգենյան Դպրեվանքի փոխքետուց, Արժանապատիկ Տ. Մինաս թին. Մարդիրոսյանը Մարթենոսի Ավելիարանից ընթերցեց «Սերմնացանի առակը» (Մագիս. ԺԳ 1-23): Ապա երգչախումբը կարարեց «Եկեղեցին հայկական», «Սուրբ, Սուրբ», «Ով Դայոց աշխարհ», «Ընդուռեալ Ասպրուցոյ» հոգեպարար երգերը, որոնք ընդմիջարկվում էին ուսանողների ասմունքներով:

Հանդիսության ավարտին ներկաներին իր օրինությունը բաշխեց Գերաշնորի Տ. Տաթև արքեպաս. Սարգսյանը, որից հետո Սևանի Վազգենյան Նովոնր Դպրեվանքի վերամուտի սույն հանդիսությունը եզրափակվեց Տայրապետական օրիներգով և Սրբազն Նոր «Պահպանիչ»-ով:

**ՎԱԶԻԿ ԴՊԻՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ
Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրեվանքի
Ելաբրանի սան**